ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը Կանանց միջազգային օրվա առթիվ
08.03.2020

Սիրելի՛ կանայք, շնորհավորում եմ գարնան ամենապայծառ տոներից մեկի՝ Կանանց միջազգային օրվա առթիվ:
Ձեր հմայքով, լավատեսությամբ, կենսախնդությամբ դուք աշխարհն ավելի լավն են դարձնում, գեղեցկացնում եք բնությունը:
Ձեր կյանքի ամեն վայրկյանը թող լցված լինի խինդով ու ուրախությամբ:
Ձեր հզորությամբ ու վճռականությամբ հանդերձ մնացեք ժպտերես, գեղեցիկ ու նուրբ:
Թանկագի՜ն կանայք, կրկին շնորհավորում և մաղթում եմ, առողջություն, անսահման երջանկություն և բարիք, թո՛ղ որ մշտապես սիրված և գնահատված լինեք: